

Հայաստանի Վերանկախացման 15ամեակի Առթիւ Ընդունելութիւն

21 Սեպտեմբեր 2006
Երուսաղէմ

Հայաստանի վերանկախացման 15ամեակի առթիւ, Իսրայէլի մէջ պաշտօնաւարող Պատուոյ հիւպատոս վսեմաշուք Յուլակ Սոմճեանի հրաւերին ընդառաջելով համակ Սաղիմահայութիւնը Հինգշաբթի, 21 Սեպտեմբեր 2006ին ներկայացաւ Նոթր Տամի պանթոկ, որուն շքեղ բակի մէջ օրուան առթիւ կայացաւ հիւրասիրութիւն - քօքթէյլ:

Սաղիմահայ երեւելիներուն կարգին նաեւ նկատելի էր ներկայութիւնը եկեղեցական Հայ թէ օտար դէմքերու առաւել քաղաքապետարանի թէ ոստիկանական ներկայացուցիչներու:

Հայաստանի վերանկախացման 15ամեակի առթիւ այս բաւականին ճոխ միջոցառումը ակարծեցաւ իրապէս թէ գեղեցիկ տրամադրութեամբ հակառակ որ շատ շատ պաշտօնական դէմքերու բացակայութիւնը նկատելի էր ինչպիսիք Հայոց Պատրիարքի, Երուսաղէմի քաղաքապետի թէ Հայասէր այլ դէմքերու:

